ԵՄ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻԶՆԵՍՆԵՐԻՆ՝ 2023-ԻՆ

2023-ին, ԵՄ-ն

€169.2 մլն բյուջեով ֆինանսավորել է 37 ծրագրերի

համատեղելով տվյալ տարում մեկնարկած նոր նախաձեռնությունները նախորդ տարիներից շարունակվող գործողությունների հետ

2023-ին տրամադրված բյուջե՝

€24.5 մլն

Հատկացված դրամաշնորհներ՝

Հատկացված դրամաշնորհներ՝

493

Հատկացված դրամաշնորհի արժողություն՝

€3.7 մլն

Աջակցության հիմնական ուղղություններ

- Ֆինանսական հասանելիություն (A2F)
- Բիզնեսի զարգացման ծառայություններ (BDS)
- Բիզնեսի նպաստավոր միջավայրի ձևավորում (BEE)

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ՝ ԸՍՏ ՏԵՍԱԿԻ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ (A2F)

Նպատակ ունի ապահովել ՓՄՁ-ների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հասանելիություն՝ վարկերի, ներդրումների կամ դրամաշնորհների միջոցով, ինչը հնարավորություն է տալիս բիզնեսի աճի և նոր հնարավորությունների ստեղծման համար:

2023-ին **€107.2 մլն** > ավելին է **+32.5%** 2022-ի համեմատ

ԲԻԶՆԵՍԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ(BDS)

Ներառում է աջակցության ծառայություններ, մասնավորապես՝ խորհրդատվություն, վերապատրաստում, շուկայի հասանելիություն և ֆինանսական ուղղորդում, որոնք օգնում են ՓՄՁ-ներին զարգանալ, բարելավել իրենց գործունեությունը և ընդլայնվել դեպի նոր շուկաներ:

Ընդհանուր **€48.3 մլն** > ավելին է **+17. 6%** 2022-ի համեմատ

ԲԻԶՆԵՍԻ ՆՊԱՍՏԱՎՈՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ (BEE)

Նպատակ ունի ստեղծել բարենպաստ միջավայր ապահովող քաղաքականություն, կանոնակարգեր, ենթակառուցվածքներ և ինստիտուցիոնալ շրջանակներ, որը նպաստում է ՓՄՁ-ների ստեղծմանը, գործունեությանը և հաջող աճին:

Ընդհանուր **€13.7 մլն** > ավելին է **+3.1%** 2022-ի համեմատ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ՓՄՁ-ՆԵՐ

2023-ին
Աջակցություն ստացած ՓՄՁ-ներ՝
6,116

Որից կանանց պատկանող կամ նրանց կողմից ղեկավարվող ձեռնարկություններ՝
2,412

Ընդհանուր թվի
39,44%-ն է

Հայաստանում աջակցություն ստացած ՓՄՁ-ների համախառն շրջանառություն՝
€1,1 մլրդ

28,29%-ով
ավելի է 2022-ի համեմատ

Այս ՓՄՁ-ներում պահպանված աշխատատեղեր՝
99,053

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ ՈԼՈՐՏՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐ

2023-ին
ստեղծված նոր աշխատատեղեր՝
18,294

ԱՌԵՎՏՐԻ ԽԹԱՆՈՒՄ՝ ԵՄ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Առևտրի դյուրացումը ԵՄ կողմից բիզնեսների համար տրամադրվող աջակցության բաղկացուցիչ մասն է: Այն նպատակ ունի պարզեցնել միջազգային առևտրի գործընթացները՝ նվազեցնելով ծախսերն ու ձգձգումները՝ նպաստելով արդյունավետության բարձրացմանն ու տնտեսական աճին:

ԵՄ կողմից ֆինանսավորվող մեկ ծրագիր,
4 միլիոն եվրոյի բյուջեով, նպատակ ունի աջակցել որակի ենթակառուցվածքի զարգացմանը՝ ապահովելով, որ ապրանքներն ու ծառայությունները համապատասխանեն անվտանգության և չափագիտության չափանիշներին: Այս աջակցությունը ներառում է ստանդարտների մշակման, փորձարկման, սերտիֆիկացման, հավատարմագրման և կարգավորող շրջանակների բարելավման գործընթացները:

Մեկ այլ ընթացիկ ԵՄ նախաձեռնություն,
2 միլիոն եվրո բյուջեով, ուղղակիորեն աջակցում է բիզնեսներին՝ իրենց արտահանման կարողությունների բարելավման գործում:

2023 թվականին ԵՄ-ի աջակցությամբ
193 ՓՄՁ սկսել են արտահանման գործունեություն:

Բացի այդ, ԵՄ-ն տեղակայել է բարձր մակարդակի խորհրդատու՝ աջակցելու Հայաստանի առևտրի ոլորտի դիվերսիֆիկացմանը, ինչպես նաև երկու այլ փորձագետներ, ովքեր կենտրոնացած են արտահանման ոլորտի վրա: